



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
«ԱՎԿԱՖԻՉ» ԿՈՄՍՏԱԿՏԱՆԻ ԹՅԱՆՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐ



Ա. ՄԻՆԱՍՅԱՆ

« 15 » 03 2018թ

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 17

**Ձեռնարկողը՝**

**«Ավկաֆիչ» ՍՊԸ**

*ՀՀ Գեղարքունիքի մարզ, Լիճք համայնք*

**Գործունեությունը՝**

**Լիճք համայնքում նախատեսվող մանրածկան  
արտադրամասի կառուցման շրջակա միջավայրի վրա  
ազդեցության նախնական գնահատման հայր**

*« Գեղարքունիքի մարզ*

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի  
տնօրեն՝



Վ. Սահակյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԸՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԸՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 17

«15» 03 2018թ.

**«Ալկաֆիշ» ՄՊԸ կողմից ներկայացված ՀՀ Գեղարքունիքի մարզի Լիճք համայնքում նախատեսվող մանրածկան արտադրամասի նախնական գնահատման հայտ**

Պատվիրատու՝	<<Ալկաֆիշ>> ՄՊԸ
Նախագծող՝	<<Սուրբ Օսկանի>> ՄՊԸ,
Ներկայացված նյութեր՝	Աշխատանքային նախագիծ, Նախնական գնահատման հայտ;
Տեղադրման վայրը՝	ՀՀ Գեղարքունիքի մարզ
Գործունեության կատեգորիան	/Գ/ կատեգորիա

Համաձայն ներկայացված աշխատանքային նախագծի <<Ալկաֆիշ>>ՄՊ ընկերությունը նախատեսում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Լիճք համայնքի Ա 10 թաղամասի 1-ին փողոց 35/4 հասցեում հիմնել մանրածկան արտադրամաս:

Մանրածկան արտադրամասի նախագծման համար հիմք են հանդիսացել Լիճք գյուղապետարանի կողմից տրված N22 ճարտարապետահատակագծային առաջադրանքը և կադաստրի կողմից <<Ալկաֆիշ>> ՄՊ ընկերությանը տրված N28112017-05-0029 սեփականատության վկայականը:

Նախատեսվում է կառուցել 20.0x72.6 մ առանցքային չափերով օգտակար մեկերեսը 1413.1 քմ մանրածկան աճեցման արտադրամաս: Արտադրամասի շինության բարձրությունը գրոյական նիշից հավասար է 9.86 մետր:

Նախագծվող կառույցը իրենից ներկայացնում է մեկ հարկանի առանց նկուղի կարկասային կառույց: Ենթի հիմքերը ժապավենաձև են, հիմնային հեծաններով:

Ենթի արտաքին պատերը ներսի կողմից իրականացվում են ուղիղ կտրվածքի երկտակ տուֆով /40սմ/: Երեսպատումը իրականացվելու է մաքրատաշ ֆեղգիտով, բազալտի համակցությամբ:

Ծածկերը իրականացվելու են մետաղական ֆերմաներով:





Արտադրամասի շինության տանիքածածկը իրականացվելու է մետաղական կավարամածով, մետաղական պրոֆիլավոր թիթեղով և ջերմամեկուսիչ նյութերով:

Արտադրամասի շինության հատակները իրականացվելու են պրեսգրանիտ սալերով և մանրատախտակով, իսկ պատուհանները և դռները մետաղապլաստե են:

Ընդհանուր շինարարական աշխատանքների տևողությունը ընդունված է 24 ամիս:

Ըստ նախագծի կառուցվող շինության մեջ, փակ ցիկլում նախատեսվում է ստանալ մինչև 1000000(մեկ միլիոն) մանրածուկ: Փակ ցիկլում պահանջվում է 3 ամիս 100 գրամանոց մանրածուկ ստանալու համար: Այդ նպատակով պահանջվում է մանրածկան աճեցման ավազանների տարեկան մեկանգամյա ջրով լիցքավորում, որը կազմում է 100000 (հարյուր հազար)մ<sup>3</sup> ջուր: Մանրածուկը նախատեսվող արտադրամասում աճեցվելու է մինչև 100գրամ, որից հետո տեղափոխվում է հողային ավազաններ՝ ապրանքային ձուկ ստանալու նպատակով՝ մեկ կիլոգրամ և ավել ըստ պահանջարկի: Առաջին տարում նախատեսվում է ստանալ 200 (երկու հարյուր) տոննա ապրանքային ձուկ: Ընդհանուր առմամբ նախատեսվող մանրածկան և հետագայում ապրանքային ձկան արտադրամասի առավելագույն հզորությունը կկազմի 1000տ: Մանրածկան աճեցման համար տեղադրվելու են 8 հատ յուրաքանչյուրը 1000մ<sup>3</sup> ջրի ծավալով և 8 հատ յուրաքանչյուրը 10000մ<sup>3</sup> ջրի ծավալով ավազաններ: Ապրանքային ձկան աճեցման համար նախատեսվում է բացօդյա 2 հողային ավազաններ՝ յուրաքանչյուրը 25740մ<sup>3</sup> ծավալով:

Նախատեսվող շինարարական աշխատանքների փուլում մթնոլորտի վրա ազդեցությունը կապված է հողային աշխատանքների և շինարարական տեխնիկայի աշխատանքի ընթացքում առաջացող արտանետումներով: Շինարարական աշխատանքները կրում են ժամանակավոր բնույթ և չունեն զգալի ազդեցություն:

Նախատեսվող շինարարական աշխատանքների փուլում շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցությունների բացառման, նվազեցման նպատակով նախատեսված են մի շարք միջոցառումներ:

Օդային ավազանի վրա ազդեցությունը կապված է հողային աշխատանքների և շինարարական տեխնիկայի աշխատանքի ընթացքում առաջացող արտանետումներով:

Օդային ավազանի աղտոտումը նվազեցնելու նպատակով նախատեսված են հետևյալ միջոցառումները

- շինարարական հրապարակները ցանկապատել համապատասխան բարձրության անթափանց թաղանթով,
- շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվաղողերը լվանալ,
- պարտադիր կարգով շինանյութերը, ավելցուկ գրունտը և շինարարական աղբը տեղափոխել անթափանց ծածկոցներ ունեցող մեքենաներով,
- շինհրապարակը օրվա ընթացքում պարբերաբար ջրել,
- սորուն նյութերը (ավազ, ցեմենտ) պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով,
- շինարարական տեխնիկայի տեղաշարժը և աշխատանքը իրականացվելու է միայն գոյություն ունեցող ճանապարհներով, բացառելով կանաչ գոտիների վնասումը, նոր տարածքների խախտումը և աղտոտումը:
- բացառվելու է շինարարական աղբի և հողերի կուտակումները բուսածածկ տարածքներում:
- պարբերաբար իրականացվելու է տեխնիկայի շարժիչների կարգապահում,
- չոր եղանակների ժամանակ իրականացվելու է խճի պահեստավորված և տեղափոխվող հողային զանգվածների խոնավացում:



Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա արտադրամասի կառուցման ընթացքում, շինարարական աղբն է (ծածկագիր 9120060001000): Այն ամբողջությամ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Շինարարական աշխատանքների ժամանակ ջուրն օգտագործվում է շինարարական հարթակների ջրցանի, ինչպես նաև ինժեներատեխնիկական անձնակազմի, բանվորների և վարորդների կոմունալ կենցաղային կարիքների ապահովման համար:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը բարեկարգել և իրականացնել կանաչապատման աշխատանքներ:

<<Ալկաֆիշ>> ՍՊ ընկերության ջրամատակարարումը իրականացվելու է <<Գոս>> ՓԲԸ հետ կնքած համաձայնագրի հիման վրա: <<Գոս>> ՓԲ ընկերությանը ՀՀ Բնապահպանության նախարարության կողմից 10.01.2018թ տրամադրվել է N000003 1-1-Ջ/Կ-Ս/Ս-Ե ջրօգտագործման թույլտվությունը:

Կենցաղ-կոմունալ հոսքաջրերը ենթարկվելու են մաքրման տարածքում նախատեսվող կենսաբանական մաքրման կայանում: Մաքրման ենթարկված հոսքաջրերը կհեռացվեն Լիճք գետ: Արտադրական պրոցեսից հոսքաջրեր չեն առաջանում:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Ալկաֆիշ>> ՍՊԸ կողմից ներկայացված ՀՀ Գեղարքունիքի մարզի Լիճք համայնքում նախատեսվող մանրածկան արտադրամասի նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն:

Մասնագետ



Ա. Մինասյան